


4-44-  
4- 50

8-149

4-44-  
44

4-44-  
45



891.71-19

100

Q-40

Ա. ԲՈՐԵՆՑԵԿԻՉ

# ԵՐԿՈՒ ՈԳԻ

Ս ո վելլա

Թարդմանութիւն

Ա. Մ Ա Զ Ա Յ Ա Ն Ի



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Ֆա. Կ. Մարտիրոսիանցի. || Տիպ. Կ. Մարտիրոսիանցա.

Օրբելյանովսկաձ ալ., ճ. № 1/2.

1899

13443

# ԹՐՈ ՀԱՐԴ

Дозволено цензурою. Тифлисъ, 24 Июня 1899 года.




45-2014  
Խ 45



## ԵՐԱՌԻ ՈԳԻ

I.



ուժ գիշերներից մէկում երկու աստղեր՝ մէկը սպիտակ, միւսը կարմիր, երկնքի անհուն օգաղուրկ բարձրութիւնից, ընկան երկրի վերայ: Մարդկանցից միայն քչերը կարողացան տեսնել այդ երկու ընկնող աստղերին—ոմանք քնածէին, ոմանք էլ զբաղուած իրանց աշխարհին գործերով ու գուարճութիւններով, իսկ քչերը՝ որոնք տեսան ընկնող աստղերին, սոյա վերաբերմամբ բոլորտին հակառակ կարծիքի էին: Նոքա որոնք նստած բարձր աշտարակների վերայ, դիտում էին երկնքին զանազան գործիքների ու խողովակների միջոցով, համոզուած էին որ տեսածները երկու ասուպներ են. իսկ միւսները որ հասկացողութիւն անդամ չունեին, թէ ինչչուս, ին-

չի միջրցաւ և ինչո՞ւ գիտում են երկինքը, և թէ ինչ  
են ասուպները—այդ աստղերի ընկնելը, մանաւանդ  
կարմրինը՝ մի խորհրդաւոր նշան էին համարում:

Սակայն թէ առաջինները և թէ երկրորդները  
սխալում էին:

Այդ երկու ընկնող աստղերը՝ երկու ոգի էին.  
սպիտակը—բարոյ, իսկ կարմիրը չարի: Հեռու ժա-  
մանակնելից երբ երկիրը սառեց, ազատուեց քառ  
դրութիւնց և նորա վերայ երևացին ըրուեր, կեն-  
դանիներ ու մարդիկ, այդ երկու ոգիները սրբնժաց  
թռիչքով, կամենալով մէկը-միւսից առաջ անցնել,  
լջան նորա վերայ և շփուելով երկրի մակերևոյթին,  
ստացան մարդկացին կերպարանք: Երբեմն բարոյ  
ոգին առաջ էր անցնում չարից. այնտեղ, որտեղից  
նա անցնում էր, ցանում էր բարի զգացմունքներ, և  
մարդիկ դառնալով ճշմարտածէր ու աղնիւ, աւելի  
լսուանում էին: Բայց աւելի յանախ առաջ էր անց-  
նում չար ոգին, որը զանազանում էր իւր նենգա-  
ւոր ճարպիկութեամբ ու աներկիւզութեամբ, և ան-  
ցնելով երկրի վերայով՝ ցանում էր խոռվութիւն,  
թշնամութիւն. մինչև անգամ այնտեղ, ուր տես-  
նում էր որ իրանից առաջ անցել է բարոյ ոգին,  
նա յանդինում էր նորից ապականել, մոլորեցնելով  
ու դժբաղդացնելով մարդկանց գալթակղեցուցիչ ու  
խորամանկ հրապուրանքով:

Այդ կատաղի կռիւը սկսուել էր այն ժամանա-  
կուանից, երբ երկրի վերայ երևացել էր առաջին

մարդը և կը վերջանայ—երբ նորա վերալից կը վե-  
րանայ վերջին մարդը:

Այդ երկու ոգիների յաւիտենական, անյաղթելի  
կռուից, առաջանում էին պատերազմներ, որտեղ  
անթիւ մարդկանց կոտորածից արեան գետեր էին  
հոսում, ամբողջ երկիրներ էին աւերտում, իսկ կեն-  
դանի մնացածներին էլ կամ սովն էր չարդում կամ  
տարափոխիկ հիւանդութիւնները և այսպիսով ոչըն-  
չանում էր մարդկութիւնը տասնեակներով, հարիւր-  
ներով ու հազարներով:

## II.



Եռնային մի նեղ շաւղով միայնակ, գիւղացու  
հասարակ հագուստով, մախաղը ուսին, բարձրանում  
էր երիտասարդ և առոյդ մի ճանապարհորդ, որի զան-  
գուր մազերը ալիքանման թափուել էին ուսերի վե-  
րայ: Նորա փայլուն աչքերը արտայայտում էին  
տխուր մտածմունք, նորա մերկ ոտները չէին փա-  
խենում ոչ փշերից և ոչ էլ սրածայր քարերից, ո-  
րոնցով ծածկուած էր լեռնային շաւիղը: Այնտեղ,  
որտեղից անցնում էր նա, ուրախացնում, կեանքը  
կենդանացնում էր՝ արևը փայլում էր պայծառ, ա-  
ռուակները քաղցր կարկաչիւնով աղմկում էին, ցե-  
րեկուայ տօթից թումշած ծաղիկները բարձրացնում  
էին զլուխները և տարածում քաղցր անուշակոտու-

իժիւն, և այս բոլորին թռչունները միացնելով իրանց քաղցր երգը, բնութիւնը աւելի սքանչելի էին դարձնում:

Ճանապարհորդը հասնելով երկու շաւկղների  
միմեանց խաչաձև կտրած տեղը, նստեց մամռա-  
պատ քարի վերայ: Միւս շաւկով, որը զառիվայրից  
օձապտոյտ իջնելով ձգում էր դէպի նոյն տեղը,  
հպարտ հպարտ առաջ էր զալիս, չալմայով ու սո-  
կեթել բանուած բաճկոնով մի ծխաւոր: Բարձր ձայ-  
նով զընգզընգում էին նորա ու յաղթանդամ ձիու  
արծաթեայ պայտերը, որոնք միանալով նորա եր-  
կայն պարանոցը գեղեցիկ զարդարող մարդարիտների  
ու զըննդող ոսկու ձայնի հետ, մի ներդաշնակու-  
թիւն էին կազմում: Արևի տակ շողջողում էին  
թանկագին քարերով զարդարուած ձիու թամբն ու  
սարքը և կողքից կախուած արծաթապատ կեռ սուրբ:  
Զեռները կրծքի վերայ խաչաձև ծալելով նստաւ  
ձիաւորը: Արևից այրուած բրոնզեայ դէմքի վերայ,  
խիտ լոնքերի տակից փայլում էին նորա չարու-  
թեամբ լի աչքերը:

Փռնչալով ու ականջները ցնցելով սև ձին  
կանգնեց քարի վերայ նոտած երիտասարդի առաջ;  
Զիաւորը նայեց նորա վերայ և մարմնովն անցաւ  
մի թեժեւ սարսուռ:

բայց ոչ մարդկան ինքնու առողջ և ելու շահ-  
ագու այս մշտական առաջնորդութեան վահանակնեան

四

եռ այստեղ ես, —հարցը նա առանց հայ-  
եացք գցելու երիտասարդի վերայ. —դու կըկի՞ն երե-  
ւացիր ինձ խանդարելու:

—Այ՞ու, —հանգիստ կերպով պատասխանեց Երի-  
տասարդը. —Ես քեզ միշտ և ամեն բանի մէջ պէտք է  
խանգարեմ:

—Գիտեմ, —փրկվածքաց ձիւսորը, —բայց  
այստեղ քո ջանքերը զուր կանցնեն: Նայիր այն հռ-  
վիտներին, որոնք ծածկուած են գիւղերով ու քա-

զաքներով. այստեղ է ապրում այն ազգը, որին դու կամենում ես պահպանել։ Այդ հովիտները — հիանալի թակարդ են. նայեր աւելի հեռուն, չե՞ն որ դու կա-

ըող ես սայն այսպէս կեռու, որպիս ոչ ոք չէ կարող, բացի միայն ինձանից.—Ինչ ես տեսնում:  
—Ես տեսնում եմ այլ ցեղի, այլ սովորութեան  
ու կոօնի առա:

— Հէնց այդ ազգն էլ բազմաթիւն է ու ուժեղը: Նա արդէն իշխում է քո փոքրիկ ազգի վերայ և նվազարող է արգելք լինել նորան, երկրի երեսից վերացնելու քո փոքրիկ ազգին:

— Դու մոռանում ես, որ կան ուրիշ ազգեր  
ևս, որոնք թոլ չեն տայ այդ անելու:

Զիաւորը ծիծաղեց այնպէս բարձր, որ մօտա-

կայ մուլժ ու խոնաւ ալրերի արձագանքը, երկար ժամանակ միմեանց յանձնելով, պահեցին նորա դիւական ծիծաղը:

— Միւս ազգերը... ինչ գործ ունեն նոքա քոփոքրիկ ազգի հետ: Կամ թէ դու մտածում ես, որ ես հոգ չեմ տարել, այն աստիճան բթացնելու նոցա զգացողութիւնները, որ նոքա հարկադրուած լինեն մոռանալու, որ այդ ազգն էլ գաւանում է նոյն երանց կրօնը. կամ թէ դու մտածում ես, որ եսա սիրութիւնը բաւականին մեծ ոյժ չէ: Ես նոցա առաջ դրել եմ մի լաւ հրապուրիչ իր և մինչեռ նոցանից իրաքանչիւրը կը նայի նորա վերայ մտածելով թէ ինչպէս, ինչ կողմով ամենքից առաջ ինքը ձեռք դցի, — ես այդ ծաղկալի դաշտերը կը ծածկեմ արիւնով:

— Իսկ ես կը լիշեցնեմ մարդկանց, որ նոքա մարդիկ են, և այդ չի լաջողուի:

Զիաւորի թուխ յոնքերը շարժուելով միմեանց միացան և աչքերի մէջ փալեցին չարութեան կացեր:

Ինձ մի խանգարիր, — արտասանեց նա խուլ ձայնով: Կան երկրներ որտեղ ցեղական թշնամութիւնը հանգել է յաւիտեան... նոյնպէս և դաւանանքի թշնամութիւնը: Երկիրներ էլ կան որտեղ կրթութիւնն ու գիտութիւնը այն աստիճան բարձրացել են, որ մըցում են նոյն իսկ մահուան հետ. կան երկիրներ էլ որտեղ չի կարող ոտք կոխել ոչ

սովը և ոչ տարափոխիկ հիւանդութիւնը: Կը գայ ժամանակ որ այդ երկրներում բոլորովին կը տիրէ բարւոյ, եղբայրութեան ու արդարութեան գաղափարը: Թող ինձ այս վալքենի անկիւնը. ով գիտէ ոորա մասին, ում պէտք է սա:

— Աորա մասին գիտէ նա, ով ինձ ուղարկել է, — պատասխանեց երիտասարդը, — և եթէ այս հովիտներում թէ կուզ մի մարդ մնացած լինէր, դարձեալ ես գալու էի նորա մօտ:

Զիաւորը բարկացած քաշեց ձիու սանձը և հպարտ ձին բարձրացրեց իւր զլուխը:

— Այստեղ ևս չես կամենում թուղնել դու ինձ միայնակ, բացականչեց ձիաւորը:

— Ամեն տեղ, ուր կը լինես դու, կը լինեմ ես ևս, — պատասխանեց երիտասարդը:

— Դարձեալ կոիւ:

— Թէ այժմ, թէ ընդ միշտ և յաւիտեան, — ասաց երիտասարդը:

Զիաւորը ձգեց ձիու սանձը, և ձին պտըտուելով բարձրացաւ յետին ոտների վերայ: Արիւնաշախաղ փրփուրը ներկել էր ձիու սանձը: Զիաւորի ոտների սուր խթանները մեխուեցին ձիու կողերին. արծաթափայլ պայտերից դուրս ցալտեցին կայծերը և բարկացած ձիաւորը մի ակնթարթում, ինչպէս քամի սլացաւ դէպի հովիտները:

IV.



Հրակը լայն կարմիր շերտերով բարձրանում էր դէպի մութ երկնակամարը: Լեռնալին արձագանքը կրկնում էր հրացանների պայմոցը և տանջուղիների ցաւալի ճիշը, որոնք աղաջում էին գթալ, խղճալ մարդկանց: Ամայացած գիւղերում մարդկալին սև ստուեները տնից տուն ընկնելով, դուրս էին քաշում կանանց, երեխաններին և նոցա լացն ու կոծը ընդհատում էին սրի մէկ հարուածով:

Գիւղի հրապարակը բերին մի խումբ կենդանի մնացած մարդիկ, մօտ 20 հոգի -- այր, կին ու երեխալ, ալստեղ բերին և խոտ, և տախտակներ, տընալին կահ կարասիք, մի խօսքով այն ամենը ինչ որ կը վառուեր և թաց արին նաւթով. մի քանի բռպէից յնտոյ կրակը լափելու էր նահատակներին:

Այստեղ գալով, նոցա մէջ կանգնեց և ուսերին ալիքանման թափուած մազերով երիտասարդը: Ոչ ոք չգիտէր թէ ով է և որտեղից եկաւ նա. բայց երբ երեաց սև ձիու վերայ նստած աւազակալին խմբի գլխաւորը, կենդանի մարդկանց այրուերովը հրճուելու, յանկարծ տեսաւ երիտասարդին, սարսափեց և ձին այնպէս շուռ տուեց, որ նրա փայլուն աչքերին չերեալ:

--- Այրեցէք, -- աղաղակեց աւազակապետը, — այ-

բեցէք շուտով, աւելացրէք նաւթ, խոտ լցրէք, այնպէս այրեցէք, որ մէկը կենդանի չը մնալ — բոլորը, բոլորը այրուեն — շնուր, շնուր...

Երիտասարդը քաջալերում էր սարսափելի տանջանքների դատապարտուածներին. նա ցածր, բայց ազդու խօսակցում էր իւրաքանչիւրի հետ, ցոյց էր տալիս երկինքը և ձեռները դնելով տղամարդկանց ուսին շոյում, փայփայում էր երեխանների գլուխը:

Հէնց այն րոպէին, երբ դատապարտուածներին շըջապատող խարոյկը բռնկուեց, լսուեց սարսափելի որոտ և կայծակը խփեց չարագործներին. առքա կուրացած աչքերը ձեռներով ծածկեցին և վազեցին գեպի ձիերը:

Աւազակապետը գլուխը կախ գցեց ձիու բաշի վերայ և ոլցաւ դէպի լեռները. քամին բարձրացրեց վերաբկուի փեշերը և անձրեւ նորա թանկագին սրի վերալից սրբեց չորացած արեան սև պոյտերը:

V.



մբողջ հօվիտը բարբարոսների իշխանութեան տակ էր գտնւում: Ինչպէս լեռնալին հեղեղատներ, զինուած մարդիկը արագ-արագ իշնում էին լեռներից, այրում էին գիւղերը, սպանում էին խաղաղ և ազնիւ բնակիչներին. նոցա կանանցն ու անսառւներին լեռներն էին քշում և յափշտակում ունեցած

չունեցածները: Ժողովուրդը հառաջում էր բարբարոսների անտանելի լծի տակ և ոչ մի միջոց չէր կարող ձեռնարկել իւր պաշտպանութեան համար: Մի որևէ է անդէն հովուի ամենափոքրիկ ընդիմադրութիւնը պատճառ էր լինում ամբողջ գիւղի նոր նոր տանջանքներին, նոր սպանութեանց: Բանտերը լրցուած էին կալանաւորներով, որոնք ենթարկուելով գաղանալին տանջանքների, սպասում էին մահացու պատիժներին: Երկիրը կորչում էր իւր դահճի հասցրած հարուածներից...

Այդ ժամանակներում գիւղերում ու քաղաքներում շրջում էր մի մարդ, որը պատկանում էր արևմուտքի ազատ ազգերից մէկին: Ոչ մի երկիւղ չէր վախեցնում նորան: Բաւական էր, որ տափր նորա անունը, իսկոյն մահացու հարուած հասցնելու համար բարձրացրած ձեռը վայր կիջնէր. եթէ նրան սիսալմամբ բանտարկէին, իսկոյն կազառուէր այնտեղից, երբ այն ազգի ներկայացուցիչը, որին պատկանում էր նա, ասէր մի խօսք:

Դա մի եւրոպական ձեխ հագնուած երիտասարդ էր, որի գրպանը լիքն էր գրոտած լիշտետրերով. նորա պարզ ու գրաւիչ դէմքը ծածկուած էր նոր և շէկ մօրուքով. նորա խոշոր աչքերում փայլում էր սէր դէպի մերձաւորը. նա շրջելով գիւղից գիւղ, քաղաքից քաղաք, գրի էր անցկացնում նահատակների գլխին զարհուրելի բարբարոսութիւններով կատարուած անցքերը:

Դիշերները նա գրում էր երկար նամակներ և ուղարկում հայրենիք. այստեղ տպագրուելով այդ նամակները լրագերների մէջ, հաղորդում էր ամբողջ աշխարհին բարբարոսների չլսուած չարագործութիւնները և հրաւիրում քրիստոնեաներին ի սէր Քրիստոսի ցոյց տալու կարեկցութիւն ու օգնութիւն իրանց եղբայրներին:

Մի անգամ նա մտաւ մի տուն, որի տէրը առաջ հարուստ, իսկ այժմ կողոպտուած ու ազքատացած մի գիւղացի էր: Տունը լիքն էր բազմաթիւ կանանցով ու տղամարդկանցով, որոնք ազատուելով կոտորածից, զրկուել էին սեփական յարկից, ուստի եկել էին այդ գիշեր նորա մօտ ապաստանելու: Տանտէրը ընդունեց բոլորին և հիւրասիրեց իւր ունեցածով. բայց այս նա արեց շատ սառը սրտով, կարծես ինքն էլ իր տանը մի հիւր լինէր: Արտասուքը շարունակ վազում էր այդ մարդու նիհարած ու չուրացած այտերից:

—Միք լաց լինի, —ասաց եւրոպական հագուստով երիտասարդը. —Ճիշտ է այսօր տարան ձեր անսասունները, այբեցին ձեր հացերը, բայց դուք կստանաք այդ բոլորը:

—Դուք կարծում էք, որ ես դորա համար եմ լաց լինում, —պատասխանեց տանտէրը: Օ՛, եթէ դրա համար լինէր, իսկապէս իրաւացի կը լինէր թէ ձեր մեղադրանքը և թէ այն շատերի, որոնք մեղադրում են մեզ որ, իբր մենք աշխատում ենք

ապահովել մեր ընտանիքներին։ Բայց ինձանից խըլեցին այն, որը ոչ չի վերադարձնի, մինչև անդամ ինքը, Աստուած, նայեցէք այստեղ։

Նա առաջնորդեց երիտասարդին դէպի միւս սենեակը. այստեղ մուլթն էր, բայց անկիւններից մէկում սպիտակ ծածկոցի տակ երկում էր մի ինչ որ առարկայ։ Տանտէրը վառեց բարակ մոմը և վերցնելով ծածկոցը ասադ. — ահա թէ ինչ են խլել ինձանից. նայեցէք։ Կարպետով ծածկուած տախտակների վերայ պառկած էր հինգ տարեկան մի երեխայ, որի պարանոցի վերայ լեարդացած ու արիւնով վէրաքը բացել էր իւր զարհուրելի բերանը։

— Կոքա մորթեցին սորան, որովհետեւ ես չէի ցանկանում տալ նոցա իմ մեծ աղջկան։ Երբ նորանքաշքում էին տանելու, երեխան քրոջ շորերից կախ ընկած լաց էր լինում, այն ժամանակ աւազակներից մէկը կտրեց սորա կոկորդը սրով։

Եւրոպական հագուստով երիտասարդը ցնցուեց։

— Սա իմ միակ որդին էր, — ասաց տանտէրը. — ախ, որքան դժուար կը լինէր ինձ, տալ նորան Աստծուն, երբ նա հիւանդանար ու մեռնէր. բայց երեխան առողջ էր ու զուարժ, սպանուելուց կէս ժամ առաջ նա խաղում էր և զուարճանում։ Նա վազգում էր արևի ճառագալիթների տակ մեր փոքր այգում և մօտենալով ծաղիկներին, շնչում էր նոցա անուշահոտութիւնը. նա անդադար կանչում էր ինձ, երբ նորան հետաքրքրում էր մի որևէ է ժըմուկ,

կամ որևէ է թիթեռ։ Նա վայելում էր կեանքը. նա պարզեատրուած էր Աստուածային պարգեով, պարոն, նա ապրել էր ցանկանում և ուներ իրաւունք ոչ պակաս քան Շըմուկը. բայց եկան մարդիկ և խլեցին նորա կեանքը, այդ դեռ քիչ էր. նոքա խոստացան գալ և այս գիշեր աղջկանս համար. այս մանկան մահն անգամ չէ կարող ազատել աղջկաս ամօթից ու դժբաղդութիւնից։

VII.



Երոպական հագուստով երիտասարդը գիշերը մնաց նորա տանը։ Նա գիտէր, որ չարագործները կը վերադառնան. ցանկանում էր հանդիպել նոցա։

Տունը լիքն էր երեխաներով ու կանացով, որոնք չէին համարձակում խփել աչքերը և ամեն մի բոլէ սարսափած հետեւում էին մութ փողոցից լսուած գիտոցին։ Ամեն տեղ լուռ էր։ Երբեմն միայն լսում էր տաք տեղից զրկուած շների ոռնոցը և երբեմն էլ հրդէհից դեռ չը հանգած տների կրակների ճայթոցը։

Կէս գիշերային լուռութեան մէջ, գիւղի փողոցից լսուեց ձիու ոտների տրոփիւն։ Աւազակները խօսակցելով ու ճնգճնգացնելով սրերը, մօտենում էին դըռանը։ Նրանցից մէկը սկսեց զուռը ծեծել և պահանջում էր բաց անել։ Տանտէրը մի խորհրդաւոր

Հայացքով նայեց եւրոպական հագուստով երիտասարդի վերայ և երբ վերջինս շըշնչաց նորա ականչին մի քանի խօսք, նա մօտեցաւ դռանը:

—Ես ամեն մի անցորդի չեմ կարող ներս թողնել, —ասաց տանտէրը, —ասա, ով ես դու և ես բաց կանեմ:

—Եհ՛, դու դեռ խօսում ես էլ, հա, շուն — գոռաց աւազակը. —դէ սպասիր, գիտցիր, որ զօրքի գլխաւորը քեզանից իջևան է ուզում:

—Թող ինքը, գլխաւորը գայ այստեղ. նորա համար բաց կանեմ դուռը, —պատասխանեց տանտէրը:

Գլխաւորը վերարկուով փաթաթուած, անշարժ նստած էր ձիու վերայ. զինուորը յայտնեց նորան տան տիրոջ խօսքերը. նա լուռ ձիու սանձը տալով զինուորին, իջաւ ձիու վրայից և գնաց դէպի դուռը:

—Բաց արա, շուտով — գոռաց նա:

Դուռը բացուեց: Եւրոպական հագուստով երիտասարդը, յենուած տանտիրոջ ուսին, կանգնած էր շէմքի վերայ: Մռալլ ձիաւորի և երիտասարդի հայացքները հանդիպեցին միմեանց. մէկի մէջ փալում էր գիւտական չարութիւն, իսկ միւսի մէջ հեղաբարյ սէր դէպի մերձաւորը:

Մռալլ ձիաւորը չը կարսղանալով տանել իւր հակառակորդի հայացքը, յետ քաշուեց:

—Կրկին իմ ճանապարհի վերայ, —խուլ փընթ-

փընթաց ձիաւորը. — այս տժունը ինձ պէտք է, իս կամենում եմ գիշերել այստեղ:

— Դու այդ չես կարող անել, որովհետև այս տունը իմն է, — հանդարժա պատասխանեց եւրոպական հագուստով երիտասարդը. — հեռացիր:

Ձիաւորը և նորա հետ եղած մարդիկը իսկոյն անդայտացան գիւղից:

## VII.

45 - ՁԵՐԻ

 սկ եւրոպական հագուստով երիտասարդը, ուրիշ շատ շատերի հետ, որոնց մէջ կար քրիստոնէական վեհ հոգի և կարեկցութեան զգացմունք դէպի մերձաւորը, շտապում էին հաղորդել աշխարհի զանազան ծալրերին, դժբաղդ երկրում տեղի ունեցած չըլսուած չարագործութիւնների մասին: Հեռագիրը անդադար խիելով, հաղորդում էր աշխարհին սարսափելի իրողութիւններ, նաև երկաթուղինները շարունակ կրում էին ամեն տեղ տասնեւիններուսդ դրաբու վերջի քրիստոնեաների սպանումների ականատեսներին. աշխարհը ականջները լարած ապշած ու տիսրած, լսում էր անմեղ մարտիրոսների հառաջանքը... այսպիս իրարաց գոյացած իրարաց նոքա հառաջում են մինչև այսօր... — «Օդնութիւն և կարեկցութիւն» — նոքա հառաջում են. — կարեկցութիւն դէպի մեր անմեղ կանաչք, դէպի

նոքա հառաջում են մինչև այսօր... — «Օդնութիւն և կարեկցութիւն» — նոքա հառաջում են. — կարեկցութիւն դէպի մեր անմեղ կանաչք, դէպի

մեր քոյրերը ու մանուկները; Տուէք ոձեռներդ և օդունցէք դուք, որոնց սրտում կայ գոնեայ միւկալժիլ կարեկցութեան զգացմունք դէպի տանջուող, հառաչող մարդկութիւնը. լիշեցէք դուք Քրիստոսի խօսքերը և մի խախտէք նորապատուիրանը: Թող անսիրտ ու փիթած փիլիսոփաները ասեն, որ բարւոյ և չարի համախմբումը կեանքի անհրաժեշտ տարրերից մէկն է. թող նրանցից մի քանիսը պնդեն, թէ չարիքը յառաջադիմութեան գլխաւոր գործոններից մէկն է. թող քաղաքագէտները հոգ տանեն իրանց սիրած հաւասարակշութեան համար: Խոկ մենք, հասարակամահկանացուներս, գործ չունենք ոչ առաջինների, ոչ երկրորդների և ոչ երրորդների հետ: Մենք կը լիշենք այս, որ մենք մարդիկ ենք և պարտաւոր ենք թէ խօսքով և թէ գործով օգնել մեզ նմաններին՝ մարդկանց՝ լինինա յոյն, թէ հրէալ, հայ կամ թէ բարբարոս ուստիափշտակող թուրք: զանազան բուժիչ յարաբմա պայքարու այլց Եօ մենք որքանէլ նոր բարբերի ազգերից լինենք, այնուամենայնիւ պատկանումանենք միւմեծ ուղղի, որի վեհ ձեռք բազմից անգամ բարձրացել է ոլաշտպանութեանցու օգնութեանահամար. — մենք բոլորս իրաւոնք ունինք ճասպասելու և զուսալու որ լսելով հարիւր հազարաւոր անարգուած մայրերի, քաղցած առ սառած երեխաների հառաջանքը, այդ հզօր ժողովարիք լիւ մատուցելով բացականչէ. բաւական է, այս նույն չեթու առաջարկութեան մասին:

7/ХI-1922

ԱԿԵՆԻԱ, Խաչի և Խաչուս

ԼՈՅԱ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Ժան Դիլ-Ռեսպակ՝ Ազնիւ ինուք . . . . 3 կ.
2. Բարանցենիչ՝ Երկու ողի . . . . . 3 կ.

ԳԻՒՆՆ Է Յ ԿՈՊ.

Մամնովի տակ են

1. Մովսասանի՝ Ճըժմոլիկը
2. » Խելադար կինը
3. Դլոդինէս փիլիսոփիան

148-149

2013

Ազգային գրադարան



NL0014306

ՀՀ Ազգային գրադարան



NL0014305

